

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ
ԱՍԵՐԻԿԱՀԱՅ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿԻՆ

Ամերիկահայ Փաստաբաններու ընկերակցութեան ճաշկերոյթն ու յայտագիրը
տեղի ունեցաւ Շաբաթ, Մայիս 9ի երեկոյեան Կլէնտոնի Հիլթըն Պանդոկին մէջ:

Օրուան հանդիսավարն էր Կարօ Յովհաննիսեան: Սրբազան Հայրը կատարեց
սեղանին օրհնութիւնը եւ փառք տուաւ Աստուծոյ, որ մեծ թիւով հայ փաստաբաններ,
որոնք կապմած են ընկերակցութիւն եւ բացի շրջանիս հայութենէն, իրենց օգնութիւնը
կը ցուցաբերեն նաեւ Հայաստանի մեր ժողովուրդին:

Տեղի ունեցաւ մրցանակներու բաշխում: Զաւէն Սինանեան ներկայացուց
Ռաֆֆի Յովհաննիսեանը, որ արժանացաւ Հրանդ Տինգի Ապարութեան Մրցանակին
"Hrant Dink Freedom Award": Կարօ Ղազարեան ներկայացուց Վիգէն Սիմոնեանը, որ
արժանացաւ Հասարակական Գործունէութեան "Public Service Award"ին, իսկ Սոնիա
Ներսէսեան ներկայացուց Անն Լուսինը, որ արժանացաւ Ցկեանս Իրագործումներու
Մրցանակին "Lifetime Achievement Award": Յայտագրի ընթացքին ներկաները հրապու-
րեց Վարդան եւ Սիրանոյշ Գէորգեան Սիջազգային Պարախումբը:

Տիար Տէյվիտ Պալապանեան ներկայացուց օրուան գլխաւոր բանախօսը՝ Գա-
լիֆորնիայի Նախկին Կառավարիչներէն Սեծայարգ Տիար Ճորճ Տէօքմէճեանը: Պրն.
Կառավարիչը տուաւ ոգելորիչ բանախօսութիւն մը եւ գնահատեց ու շնորհաւորեց
Ամերիկահայ Փաստաբաններու Ընկերակցութիւնը՝ իրենց կատարած սքանչելի ծա-
ռայութիւններուն համար: